Հաստատված է
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի
«20» հունվարի 2020 թ. թիվ 141 նիստում
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն
Ա. Սարգսյան

ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՃԱՆԱՉՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն ընթացակարգի նպատակն է սահմանել ԳԿՄԿ գործընկեր օտարերկրյա բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների կուտակած կրեդիտների ճանաչման շրջանակներն ու հիմնական սկզբունքները:

1.2. Ընթացակարգի ամբողջական կիրարկման և պատշաճ կերպով կրեդիտների ճանաչման գործընթացը կազմակերպելու համար պատասխանատու է համապատասխան ամբիոնի վարիչը կամ կրթական ծրագրի պատասխանատուն՝ Ուսումնական մասի պետի անմիջական վերահսկողության ներքո: Գործընթացի կողմերը պարտավոր են ապահովել որոշման կայացման համար պահանջվող ամբողջական տեղեկատվությունն ու անհրաժեշտ փաստաթղթային հենքը:

1.3. Ընթացակարգը ներքին օգտագործման փաստաթուղթ է և հասանելի է ԳԿՄԿ բոլոր աշխատակիցներին և ուսանողներին:

2. ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

2.1. Ուսանողների շարժունությունը չպետք է հանգեցնի ԳԿՄԿ կրթական ծրագրով սահմանված ուսման սահմանված ժամկետի կամ ծանրաբեռնվածության ավելացմանը:

2.2. Ուսանողը, նախապես համաձայնեցնելով և կնքելով ուսումնառության եռակողմ պայմանագիր, կարող է կուտակել կրեդիտներ ԳԿՄԿ գործընկեր արտերկրյա բուհերից, որոնք նախապես համաձայնեցվել են ամբիոնի հետ և բխում են ուսանողի հիմնական կրթական ծրագրի նպատակներից և վերջնարդյունքներից:

2.3. Շարժունության արդյունքում կրեդիտներով արտահայտված կրթական արդյունքները չպետք է գերազանցեն համապատասխան որակավորում ստանալու համար անհրաժեշտ ընդհանուր ուսումնական ծանրաբեռնվածության մագիստրոսի կրթական ծրագրի 50 տոկոսը և հետազոտողի կրթական ծրագրի 30 տոկոսը:

2.4. Կրեդիտների ճանաչման գործընթացի հիմքում դրվում է կրթական ծրագրի վերջնարդյունքների համադրելիությունը, այլ ոչ թե կոնկրետ դասընթացի բովանդակության

համարժեքությունը:

2.5. Միջինստիտուցիոնալ պայմանագրերի շրջանակում իրականացված միջազգային կրեդիտային շարժունության պարագայում շարժունության ընթացքում ձեռք բերած բոլոր կրեդիտները, համաձայն ուսումնառության պայմանագրի և հավաստված գնահատականների ներդիրի, պետք է ընդունվեն և արտահայտվեն ուսանողի ՄՈԳ-ի հաշվարկում և դիպլոմի հավելվածում, եթե դրանք չեն հակասում տվյալ կրթական ծրագրի վերջնարդյունքներին:

3. ՃԱՆԱՉՎՈՂ ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ԹՎԻ ՀԱՇՎԱՐԿՆ ԸՍՏ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ

3.1. Եթե կրեդիտների ճանաչման նպատակով ներկայացված դասընթացի անվանումը և կրեդիտների քանակը համընկնում են ԳԿՄԿ-ի կողմից առաջարկվող դասընթացի անվանմանը և կրեդիտների քանակին, ապա դասընթացի կրեդիտների ճանաչումը կատարվում է ինքնաբերաբար, առանց հավելյալ աշխատանքի:

3.2. Եթե ճանաչման նպատակով ներկայացված դասընթացի համար կուտակված կրեդիտների քանակը գերազանցում է ԳԿՄԿ-ում համապատասխան դասընթացի համար նախատեսված կրեդիտներին, ապա

- ամբիոնի վարիչը կամ կրթական ծրագրի պատասխանատուն՝ խորհրդակցելով տվյալ ամբիոնի միջազգայնացման պատասխանատուի և Ուսումնական մասի պետի հետ, որոշում է, թե արդյոք կարող են ավել կրեդիտները հաշվարկվել կրթական ծրագրով նախատեսված մեկ այլ դասընթացի, օրինակ՝ կամընտրական դասընթացի համար,
- Ճանաչման այլընտրանք չունենալու դեպքում, ճանաչվում է միայն այնքան կրեդիտ, որքան նախատեսված է ԳԿՄԿ-ում գործող համապատասխան կրթական ծրագրի համար:

3.3. Եթե ուսանողի կողմից հյուրընկալող բուհում ավարտած դասընթացը ստուգարքի տեսքով է եղել և ուսանողը չի գնահատվել, ապա դասընթացի կրեդիտները ճանաչվում են առանց ՄՈԳ-ի հաշվարկում ներառվելու:

3.4. Եթե կրեդիտների ճանաչման նպատակով ներկայացված դասընթացի վերջնարդյունքները ոչ մի կերպ չեն համապատասխանում կրթական ծրագրի վերջնարդյունքներին, դրանք չեն հաշվարկվում ուսանողի ՄՈԳ-ի ձևավորման մեջ:

3.5. Ամբիոնի կողմից կրեդիտների ճանաչման կամ մերժման վերաբերյալ կայացված ցանկացած որոշում արձանագրության մեջ հստակ հիմնավորված պետք է լինի:

4. ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԻ ՓՈԽԱՐԿՈՒՄ

4.1. Ճանաչված կրեդիտների գնահատականները ևս արտացոլվում են վերջնական որակավորման մեջ ներառվելով ուսանողի ՄՈԳ-ի հաշվարկում:

4.2. Եթե ԳԿՄԿ և հյուրընկալող համալսարանի գնահատման համակարգերը նույնն են, ապա ուսանողի գնահատականը նույնությամբ փոխանցվում է առանց լրացուցիչ աշխատանքի:

4.3. Եթե գնահատման համակարգերը տարբեր են, ապա ամբիոնի վարիչը, խորհրդակցելով տվյալ ամբիոնի միջազգայնացման պատասխանատուի հետ, իրականացնում է գնահատականների փոխարկում՝ անհրաժեշտության դեպքում դիմելով Ուսումնական մասի պետին:

4.4. Սույն փաստաթղթի Հավելված 1-ում ներկայացված է միջազգային կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում Իտալիայի Տուշայի համալսարանի համապատասխան դեպարտամենտների հետ գնահատականների փոխարկման նմուշաձևը:

5. ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

- Դիմումի ներկայացում

Ուսանողը, ավարտելով միջազգային կրեդիտային շարժունությունը, ներկայացնում է դիմում համապատասխան ամբիոնի վարիչին՝ կցելով գնահատականների ներդիրը (transcript of records), իսկ համապատասխան ամբիոնի միջազգայնացման պատասխանատուն և/կամ Արտաքին կապերի բաժինը տրամադրում է տվյալ բուհի գնահատման համակարգը: Առանց անհրաժեշտ փաստաթղթային հենքի դիմումին ընթացք չի տրվում:

- Փաստաթղթերի ուսումնասիրություն

Ամբիոնի վարիչը կամ կրթական ծրագրի պատասխանատուն ուսումնասիրում են ուսանողի դիմումը և շարժունության վերաբերյալ մյուս փաստաթղթերը՝ անհրաժեշտության դեպքում խորհրդակցելով տվյալ ամբիոնի միջազգայնացման պատասխանատուի, Արտաքին կապերի բաժնի և Ուսումնական մասի պետի հետ:

Ամբիոնի վարիչը/ կրթական ծրագրի պատասխանատուն կարող է փաստաթղթային ուսումնասիրությանը ներգրավել նաև համապատասխան դասընթացների դասախոսներին:

Այս փուլում, անհրաժեշտության դեպքում, կարող են կազմակերպվել հանդիպում-քննարկումներ ուսանողի և ամբիոնի վարիչի/ կրթական ծրագրի պատասխանատուի միջև՝ նախորդ կրթության վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար:

- Արդյունքների ճանաչում և փաստաթղթավորում

Կրեդիտների ճանաչումը հաստատվում է ամբիոնի նիստի արձանագրությամբ, որտեղ առնվազն նշվում է.

- Ուսանողի անուն ազգանունը, շարժունության կիսամյակը,
- Օտարերկրյա բուհում ուսանած դասընթացների անվանումները և կուտակած կրեդիտները, ԳԿՄԿ-ում ընդունվող դասընթացների համարժեքները և համապատասխան կրեդիտները,
- Տվյալ կիսամյակում վերահանձնման ենթակա առարկաները և վերահանձնման ժամկետները

- Արդյունքների ծանուցում ուսանողին

Համապատասխան ամբիոնի ուսումնական խորհրդատուն կրեդիտների ճանաչման վերաբերյալ որոշումը էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկում է ուսանողին՝ անհրաժեշտության դեպքում նաև կցելով արձանագրության քաղվածքը:

- Բողոքարկում

Ուսանողը կարող է բողոքարկել կրեդիտների ճանաչման մասին ամբիոնի որոշումը մեկշաբաթյա ժամանակահատվածում՝ ներկայացնելով դիմում Ուսումնական մասի պետին և կցելով հավելյալ հիմնավորող փաստաթղթեր:
Բողոքարկմանը համապատասխան կատարվում է կրկնակի ուսումնասիրություն և հրավիրվում է ամբիոնի նիստ ուսանողի մասնակցությամբ:

1. Արդյունքների ամփոփում ուսանողի անհատական ուս. պլանում և դիպլոմի հավելվածում (ընթացիկ)

Կրեդիտների ճանաչման վերաբերյալ որոշման համապատասխան ԳԿՄԿ, ներքին տեղեկատվական համակարգում ուսանողի անհատական ուսումնական պլանում անցկացվում են գնահատականները:
Ճանաչված դասընթացները ընդգրկվում են դիպլոմի հավելվածում՝ աստղանիշով նշելով այն հաստատությունը, որտեղ անցել են տվյալ դասընթացները:

Հավելված 1

UNIVERSITY OF TUSCIA
DEIM: DEPARTMENT OF ECONOMICS AND ENTERPRISE

ECTS grade: E - SUFFICIENT		ECTS grade: D - SATISFACTORY						ECTS grade: C - GOOD			ECTS grade: B - VERY GOOD		ECTS grade: A - EXCELLENT
18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	30 with honour
E	E	D	D	D	D	D	D/C	C	C	C	B	B	A

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՄԲԻՈՆ
ԳՆԱՏԱՀԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԹՎԱՅԻՆ ՀԱՄԱՐԺԵՔ

ստուգված	գնահատման ավանդական եղանակ՝ **բավարար**					գնահատման ավանդական եղանակ՝ **լավ**					գնահատման ավանդական եղանակ՝ **գերազանց**		
7.5	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20

UNIVERSITY OF TUSCIA
DEB: DEPARTMENT OF ECOLOGY AND BIOLOGICAL SCIENCES

ECTS grade: E - SUFFICIENT				ECTS grade: D - SATISFACTORY				ECTS grade: C - GOOD			ECTS grade: B - VERY GOOD		ECTS grade: A - EXCELLENT
18	19	20	21	22	23	24	25	26	27	28	30-29	30	30 with honour
E	E	E	E	D	D	D	D	C	C	C	B	A/B	A

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՄԲԻՈՆ
ԳՆԱՏԱՀԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԹՎԱՅԻՆ ՀԱՄԱՐԺԵՔ

ստուգված	գնահատման ավանդական եղանակ՝ **բավարար**					գնահատման ավանդական եղանակ՝ **լավ**					գնահատման ավանդական եղանակ՝ **գերազանց**		
7.5	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20